

բանասերութիւնը՝ իւր եւրոպական կաղապարի վրայ նորածեւումը, հայագիտութիւնը՝ արեւմտեան գիտութեան ծանօթութիւնը եւ հայ նոր սերունդը հայագիտական ուսմանց անյատակ ծովին մէջ նաւելու գիտութիւնը:

Չխօսեցաւ Հ. Տաշեան հրապարակներու վրայ, քայց հնչեցին իր գրչի արտադրութիւնները՝ իբրեւ փող գրագէտներու սեղանի վրայ՝ արծարծելու սէր, յորդորելու ուշադրութիւն դէպի քաղաքակրթական մնացորդները նախնեաց, գրգիռ ընծայելու խորհող մտքին ընթանալու գծուած ուղիով յառաջ...: Եւ շարժումը, որուն մղում՝ շնորհեց Տաշեան, պիտի կատարէ իւր խաղացքը անյաւ, եւ իւր նոր նոր ալիքներով պիտի ներգործէ ինչպէս անցեալ, նոյնպէս նոր եւ ապագայ սերունդներու վրայ:

Ազնիւ Մարդը, հայրենասէր Սիրտը, ստեղծող Միտքը եւ յերիւրող Ռգին, որոնք ապրեցան յանձին Տաշեանի, պիտի պահպանեն իրենց կենդանութիւնը մարդկան յուշերու մէջ: Ոչ միայն Մխիթարեան Միաբանութեան համար եղաւ Տաշեան պարծանք, այլ եւ համօրէն Ազգին համար փառք եւ ունի իրեն տիեզերական գրականութիւնը երախտագէտ:

Հայ մտաւոր կեանքի հորիզոնին վրայ եղաւ Տաշեան ցանցառաղէպ երեւոյթ մը, մէկը այն լուսարձակ գիտաւորներէն, որոնք իրենց երկարամիայ ընթացքին կ'երեւան երկնակամարի վրայ կարճօրեայ ցուցմամբ միայն, քայց ունին իրենց լոյսն անշէջ: Անհետացաւ Տաշեանն ալ, քայց ունի ան հայ մատենագրութեան մէջ տեղ եւ անոր հեղինակութիւններուն ճառագայթարձակ լոյսը պիտի ձգէ յինքն մարդկան պշուցեալ աչքերը ընդերկար:

Դուն, սիրելի Հ. Յ. Տաշեան, որ սիրեցիր միայնութիւնը, եղար անձնատուր գրքերու, փարեցար գրչի եւ վաստակեցար իբրեւ անխոնջ մշակ սիրեցեալ Ազգիդ գրական անդատանին մէջ, հեռու ծափէ եւ գովքէ, ունիս Բեզ երախտագէտ բանասիրական աշխարհը. Բու կոյս ճակատիդ Բու վաստակներդ պիտի հիւսեն պսակներ մարգարտայեո:

Հ. Մ. Ա.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1, 2

ՅՈՒՆՈՒԱՐ—ՓԵՏՐՈՒԱՐ

ԽԷ. ՏԱՐԻ 1933

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՎԵՏ

ՅԻ ԻՒՐ ՊԸՏՄՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ ՊԸՏԵՐԱԶՄԻՆ

ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՒՆ

(Շարունակութիւն):

35. ԱՇԽԱՐՀԱԳԻՐ

Կը դրէ Եղեշէ (Բ. 19), թէ արքայից արքայ «գմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում ամուսն էր Դեմշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, գողջոյն բերեալ զմեծ քաղաքին, եւ խաղաղասէր կեդձաւորութեամբ աշխարհագիր առնէր¹ ամենայն երկրին Հայոց ի բողոքիւն հարկաց եւ ի բեքեւութիւն ծանրութեան պրուծիւն: Թէպէտ եւ ի վերին երեսս գայս² կեդձաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդ³ չարագոյն ցուցանէին:

Առաջին՝ զագատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն:

Երկրորդ՝ միայնակեաց⁴, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ⁵:

Երրորդ՝ զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց:

Չորրորդ՝ բանաւրկութեամբ էարկ գնալստարարսն⁶ ընդ միմեանս. եւ յամենայն տան արար խոռվութիւն:

Եւ գայս ամենայն առնէր (զի) բեքեւ գովարանութիւնն քակեցէ եւ գուլտն եկեղեցւոյն ցրուեցէ եւ գովայնակեացս փախուցէ, եւ զշինականս վատնեցէ եւ <զի

¹ Տպ. Է. Չեռ. Վիեննայի Թ. 971. «առնել»:
² Տպ. պրեւսիայ: Տպ. «Է. . . գայս» չունի. այսպէս Չեռ:
³ Չեռ. խորհուրդքն:
⁴ Տպ. միայնակեաց քրիստոնեայք:
⁵ Չ. ընդ նովին աշխարհագրով արկ:
⁶ Տպ. գնալստարարսն էարկ:

մարդիկ> առ յոյժ աղատութեանն՝ ակամայ դիմեցեն յօրէնս մոգուց⁷:

Եւ եւս չարագոյն հինգերորդն⁸. Բանգի որ հագարապետ աշխարհին էր՝ իբրեւ գիայր⁹ վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից. գրգռեալ¹⁰ յարոյց գամբաստանութիւն ի վերայ նորա. եւ հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն եւ միւս եւս մոգպետ՝ դատաւոր աշխարհին. զի գեկեղեցւոյն զփառսն¹¹ աղաւղեցեն:

Բայց սակայն՝ թէպէտ¹² եւ ամենայն գարծխ այս դժմեայ էին, չեւ էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին¹³. Վասն այնորիկ¹⁴ եւ ոչ ոք ընդդիմացաւ նա, թէպէտ եւ էր ծանրութիւն հարկացն: Վանգի՝ ուստի արժան¹⁵ էր առնուլ հարիւր դահեկանաչափ, կրկին¹⁶ առնուին: Սոյնպէս եւ Եպիսկոպոսաց եւ Երիցանց¹⁷ դնէին <հարկս>. ոչ միայն շինաց այլ եւ աւերակաց: Նա բնաւ եւ¹⁸ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից եւ սակից, բաժից եւ հասից եւ հարկաց¹⁹ լերանց եւ դաշտաց եւ մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն²⁰ առնուին, այլ հինաբար յափշտակելով²¹. մինչեւ ինքեանք իսկ²² մեծապէս զարմանային, թէ ուստի՞ այս ամենայն գանձ էլանէ, զիա՞րդ շէն կայցէ աշխարհն»:

⁷ Չ. մոգուցն:
⁸ Չ. Հինգերորդն եւ Էւս...:
⁹ Չ. հայր:
¹⁰ Տպ. դրգուեաց:
¹¹ Չ. գփառս:
¹² Չ. չունի «թէպէտ»:
¹³ Չ. յեկեղեցին յայտնի:
¹⁴ Տպ. այսորիկ:
¹⁵ Տպ. արժանն:
¹⁶ Չ. կրկին ին եւ առնուին:
¹⁷ Չ. Եպիսկոպոսացն եւ Երիցանցն:
¹⁸ Տպ. չունի «Էւ»:
¹⁹ Չ. բաժից եւ յարկաց:
²⁰ Չ. արժանաւորութեանն:
²¹ Չ. յափշտակէին:
²² Չ. չունի «իսկ»:

Հայ նախարարները, որոնք կանչուած էին արքունիք, կ'ըսեն արքային. «... յայնց ժամանակաց մինչև ի քո հայրենի աքոռուք եւ մեք գնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց քերեւս քեզ լաւագոյն քան առաջնացն... Հասք մտից եւ սակից»²³, եւ որ այլ եւս էին հարկի աշխարհիս, բազմագոյն քան առ հարբն քով գային յարժուինս, նա'ել գուրք եկեղեցի²⁴, որ էր ազատ ի Գրիստոս՝ ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, եւ դու ընդ հարկաւ եղիր. եւ մեք առ սէր քոյոյ տէրութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ: ... Իսկ չարապետն... ասէ. վնաս համարիմ ընդունել ի գանձ արժուին գիարկս աշխարհին ձեռոյ...»:

Ներքին Պատմութեան պատմական հոլը գտնելու համար նոր կուսան կ'ընծայէ Աշխարհագիրը, որուն մասին է հոս խօսքը: Հին Հայաստանի տնտեսութիւնը, որ մարդկան համար շրջանին դեռ եւս մնացած էր հին հունին վրայ, պատմական նոր փուլի մէջ կը մտնէ. հին կարգերը, որոնցմով կառավարուած էր երկիրը, դադար կ'առնեն: Հինն նորին անցման վայրկեանն է, որ կը հնչէ. նոր դարաշրջան մը կը սկսի: Չգալի է վայրկեանին լրջութիւնը. հին տնտեսութեան սովոր մարդկան օտարոտի կ'երեւան նոր տնտեսական կարգերը՝ «ճանրութիւն հարկաց»՝ ընդհանուր աժգոհութիւնը, որ սկիզբ կ'առնէ ասկէ, կ'արտայայտուի Ներքին գրչով:

Եթէ չունենայինք իսկ ուրիշ յենարաններ, գամագիտ ըլլալու Ներքին պատմութեան յորինման թուականին, անոր պատմութեան շօշափած ժամանակներուն, բաւական էր այս աշխարհագիրն ինքնին գլխովին, բանալու համար աչքերը, թէ ո՞ւր կ'ապրի եւ ի՞նչ կը պատմէ պատմագիրը: Կը խոստովանիմ, ինձ համար անակնկալ մը եղաւ, երբ կանգ առնելով աշխարհագրի քով ես ինձ հարց տուի թէ ճանօթ է աշխարհագիրս Պարսից պատմութեան. եւ թղթատելով Տարբերի պատմութիւնը կարդացի հոն խոսքով Ա. Անուշըրուանի օրով տեղի ունեցած աշխարհագրի մանրամասնութիւնները: Երկու պատմագիրներու հաղորդած տեղեկու-

²³ Այս մասը փոփոխութիւն կրած է խմբագրչէն՝ վերածուելով երրորդ դէմքի. մենք կարելոր համարեցանք ըստ իմաստին ուղղել եւ լրացնել. Տղարքին եւ ձեռագիրն ունին. «քան դատաջնոցն... Իսկ գմտից եւ գաւկից... աշխարհին... առ հարբն նորս երբայր յարքունիս»:
²⁴ Տղ. եւ Ձ. ի սուրբ Եկեղեցոյ:

թիւնները ըստ ամենայնի նոյն գտայ. անոնք կը լրացնէին եւ կը լրասաւորէին գիրար: Կասկածս, որ գոյացած էր իմ մէջ նկատմամբ Ներքին պատմութեան հարապատմութեան, ուստիմով մը փոխուեցաւ ստուգութեան. Ներքին դադարները լուծուած էր: Ուրիշ գիտնականներ ալ՝ Ն. Արոնց²⁵ եւ Յ. Մանանդեան²⁶ ունեցած էին աչքի առաջ Ներքին եւ Տարբերի այս տեղիքները. բայց նախապաշարմունքը, որով մերձեցած էին Ներքին, թոյլ չէր տուած թափանցելու դադարներին, ասով վրիպած էին նաեւ մարդկանութեան շրջանի հայ տնտեսութեան պատմութեան նուիրած իրենց ուսումնասիրութիւններու մէջ վերահասու ըլլալ Ներքին տողերուն ճշգրիտ եւ պատմական իմաստին:

Ներքին նկատի ունի հոս արքայից արքայի հրամանով կատարուած «աշխարհագիրն ամենայն երկրին Հայոց ի թողութիւն (այս ինքն ի թուլութիւն) հարկաց եւ ի թեթեւութիւն ճանրութեան այրուծիոյն»: Հարկերու նոր օրէնքները սակայն յուսացուած թեթեւութիւնը չբերին երկրին համար, ուր կ'երեւայ թէ հին հարկահանութեան կարգերը աւելի նպաստաւոր եղած են ժողովրդեան եւ եկեղեցականներու. այնպէս որ նոր հարկերը երկրին համար նկատուած են «ճանրութիւն»: Այս ճանրութիւնը կը կայանայ գլխաւորաբար հետեւեալ կէտերու մէջ.

1. Եկեղեցին, «որ էր ազատ ի Գրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ», «ընդ հարկաւ» կը դուրսի. այսինքն եպիսկոպոսները, երէցներն ու միայնակեացները, որոնք ազատ էին ամէն հարկէ, կը հարկուին:
2. Նոր օրէնքները կը պատճառեն «ճանրութիւն մտից եւ սակից, բաժից եւ հասից եւ հարկաց լերանց եւ դաշտաց եւ մայրեաց», որով «հարկը աշխարհիս բազմադոյն» քան որ էր յառաջագոյն («առ հարբն») կ'երթային արքունիք:
3. Ծանրութիւնը աւելի զգալի կ'ըլլայ, երբ գործակալները կը հարստահարեն ժողովուրդը. «ո՛չ ըստ արքունի արժանաւորութեանն» — այս ինքն ոչ թէ արքունի դիւա-

²⁵ Н. Адонцъ, Армения въ эпоху Юстиниана, С. Петербургъ, 1908, էջ 484—485:
²⁶ Յ. Մանանդեան, Հայաստանի արքունի հարկերը մարդկանութեան շրջանում. Տեղեկագիր Հ. Ս. Ն. Գիտութեան եւ Արվեստի Ինստիտուտի. Թ. 1 (1926), էջ 3—44:

նէն որոշուած սակին համաձայն կ'առնէին հարկերը, այլ «ուստի արժան էր առնուլ հարկը դահեկանաւ չափ, կրկին առնուին» «հինարար յափշտակելով»:

4. Հազարապետութիւնը, որ Հայերու ձեռքն էր, կը յանձնուի պարսիկի մը. եւ դատաւորութիւնը՝ մոզպետի:

Անշուշտ այս փոփոխութիւնները, որոնք կը բղխէին հարկահանութեան նոր օրէնքներէն, շուտով կեանքի մէջ մտան. ճանրութիւնը զգալի եղաւ միայն յընթացս տարիներու:

Եթէ ընդունինք վայրկեան մը, թէ պատմագիրը հոս 440—450 տարիները նկատի առած է, ինչպէս ընդունուած էր մինչեւ օրս, — պիտի ելլեն մեզի ընդ առաջ անթիւ անհամաձայնութեան կէտեր, որոնք հակասութեան մէջ ըլլան Ն. դարու ժամանակակից աղբիւրներու հետ: Ոչ Կորին եւ ոչ Շահապիվանի ժողովոյն կանոնները ունին այս մեծ փոփոխութիւններու եւ անոնց հետեւութիւններու մասին ակնարկութիւն: Ղ. Փարպեցի, որ այնպէս մանր հարցաքննած է ժամանակակիցները 451ի հայկական ապստամբութեան պատճառներու մասին, թեթեւ ակնարկութիւն մ'իսկ չ'ընեն հարկերու ճանրութեան նկատմամբ: Անոնք եթէ գոյութիւն իսկ ունենային, բարձուած պէտք է ըլլային 448—450 տարիներուն, երբ մարդպանը հայ էր՝ Սիւնեաց տէրը, եւ հեռացուած էին պարսիկ գործակալները. նոյն իսկ հաւաքուած հարկերը դեռ չէին յանձնուած արքունի գանձարանին (հմմտ. § 31): Յազկերտ Բ. ի նամակն առ Հայս կ'ենթադրէ երկիրն գոհ եւ անտրտունը. անտրտունը գոնէ այն իմաստով, որ մասնաւոր ճնշում չէր գործադրուեր ժողովրդեան վրայ հարկերու տեսակէտով: 448ին երբ դուրսարուած է Շահապիվանի ժողովը՝ հազարապետութիւնը վահան Ամատունուց եւ մաղխաղութիւնը վրիւ խորհուրունուց ձեռքն էր: Այնու որ ժողովը կարող է համարձակ դատել ազատներն եւ շինականները եւ տուգանել իսկ դանոնք գրամով եւ աշխատանքով, կը տեսնուի թէ դատաւորութիւնն ալ եկեղեցականներու ձեռքն էր. չկային երկրին մէջ մոզպետ պաշտօնեաներ: Անխախտ էր նոյնպէս Եկեղեցոյ ազատութիւնը. կը վկայէ Ղազար Փարպեցի իւր Թղթին մէջ (էջ 188) թէ «պարեգօտաւորք ազատեալ են ի Գրիստոս»:

Վահան Մամիկոնեան 484ին, երբ իւր հաշտութեան պայմանները կը գնէր Նիխորի եւ ապա Վաղարշի առաջ, խօսք չէր ընել ամենեւին հարկերու շատութեան, եկեղեցոյ անազատութեան, այրուծիոյ ճանրութեան, պարսիկ գործակալներու կեղեքումներու կամ նման աժգոհութիւններու մասին:

Պետութեան կարգադրութիւնները հարկերու մասին անշուշտ մասնաւորապէս Հայաստանի համար չէին եղած. կ'արժէին անոնք նաեւ ոչ-հայկական նահանգներու համար: Այսպիսի լայն շափով կատարուած աշխարհագիր մը, եթէ տեղի ունեցած ըլլար Յազկերտ Բ. ի օրով, պիտի գտնէր արձագանգ դէժ ասորի եւ արար հեղինակներու քով: Կ'անգիտանան սակայն անոնք նման դէպք մը. որ նշան է թէ Ն. դարու ընթացքին ո՛չ Յազկերտ եւ ո՛չ Պերոգ ունեցած են նման խորհուրդ մը:

Բայց կը պատմէ Տարբեր, որ աշխարհագիր մ'ընելու ծրագիրը յղացած է Կաւատ եւ գործադրած անոր որդին Սոսրով Ա. Անուշըրուան. ուստի եւ Ներքին յիշած աշխարհագիրը հարկ է նոյնացնել ա՛յն աշխարհագրին հետ, որ ի գլուխ ելաւ Սոսրովի օրով: Այս կերակացութիւնը կ'ուժաւորէ Գենչապուհ անունը, զոր կը յիշատակէ Ներքին իրբեւ գործակալ մը, որ մասնաւորապէս աշխարհագրի համար ուղարկուած է Հայաստան: Տեսանք վերագոյն (§ 31) թէ համանուն մարդպան մ'ալ կը յիշէր Ասողիկ, որուն գործունէութիւնը կ'իյնար Ձ. դարու երրորդ քառորդին: Երկու անձնաւորութիւններու նոյնութիւնը ամէն կասկածէ վեր է:

Ծանօթանանք այժմ Տարբերի²⁷ հաղորդած տեղեկութեանց հետ, որոնք կը վերաբերին Սոսրով Ա. թագաւորի հրամանաւ տեղի ունեցած աշխարհագրին:

«Սոսրով Անուշըրուանի թագաւորութեան յառաջ սովոր էին Պարսից թագաւորները իրբեւ գլխաւոր հարկ վերցնել իւրաքանչիւր շրջանէն բերքին երրորդ կամ չորրորդ կամ չինգերորդ եւ կամ վեցերորդ մասը, նոյն շրջանի ջրաբաշխութեան եւ հողամշակութեան համեմատ. իսկ իրբեւ գլխահարկ կ'առնէին որոշ գումար մը:

Արդ Կաւատ, Պերոգի որդին, իր թագաւորութեան վերջին տարին կարգադրեց որ

²⁷ Tabari-Nöldeke, էջ 241—247:

աշխարհը՝ թէ՛ դաշտերն եւ թէ՛ լեռները՝ չափուի. որպէս զի հարկերը ըստ այնմ ճշդիւ սահմանուին: Այս աշխարհագիրը (գետնաչափութիւնը) կատարուած էր. բայց խնդիրը բոլորովին չէր վերջացած երբ վախճանեցաւ Կաւատ: Բայց երբ Խոսրով, անոր որդին, թագաւոր եղաւ, հրամայեց որ գետնաչափութիւնը (աշխարհագիրը) ի գլուխ հանեն վերջացնեն. միաժամանակ հաշուի առնուին արմաւենիներն ու ձիթենիները, ինչպէս եւ (մարդկան) գլուխները: Ընդհանուր գումարը պիտի նշանակէին դպիրները: Այնուհետեւ իր քովը կանչեց բոլոր (առ այս ընտրուած) մարդիկ եւ հրաման տուաւ նոտարներուն որ լու ի լու կարդան հարկի (ենթակայ իրերու) գումարը: Անոնք մի առ մի ներկայացուցին հողաբաժինները, դաշտային պտուղներու դանազան տեսակները, դարձեալ արմաւենիներու, ձիթենիներու եւ (մարդկան) գլուխներու թիւերը:

Երբ աւարտեցաւ ընթերցումը, Խոսրով յայտարարեց անոնց. Այժմ մեր առաջնգիր նպատակն է՝ չափուած գրիւի²⁸ (ցորենի վարելահողի) նշանակուած գումարին, ինչպէս նաեւ արմաւենիներու եւ ձիթենիներու եւ գլուխներու թուին համեմատ հաստատ օրէնք դնել եւ սահմանել. այնպէս մը, որ տարին երեք բաժնով վճարուին (հարկերը). այս եղանակաւ հնարաւոր պիտի ըլլայ մեր գանձարանին մէջ դրամ հաւաքել, որպէս զի երբ մեր սահմանաբերդերէն կամ սահմանակից աշխարհներէն լուր հասնի, թէ հոն կարգի խանգարում մը կամ ուրիշ անյաջողութիւն մը տեղի ունեցած է, զայն դարձանելու եւ կամ նուաճելու համար պէտք եղած ժամանակ պատրաստի դրամ ունենանք. որովհետեւ բազմալի չէ մեղի նման դէպքերու համար (ժողովրդեան) նոյնհետայն նոր հարկեր նշանակել: ... Ապա ընտրեց Խոսրով քանի մը բանիմաց եւ մտացի մարդիկ եւ պատուէր տուաւ, որ այլ եւ այլ (վարելահողի) դանազան դասերու չափերն եւ արմաւենիներու, ձիթենիներու եւ հարկատու գլուխներու թիւերը քննեն եւ ըստ այնմ սահմանեն հար-

կին օրէնքը. եւ այս այնպէս մը, որ հպատակներն իրենց աստիճանին համեմատ կարենան բարեկեցիկ եւ հանդիստ կեանք մը վարել: Արդիւնքի մասին զեկուցում պիտի տրուէր իրեն: Այնուհետեւ իւրաքանչիւր անհատ յայտնեց իւր կարծիքը օրինադրութեան ձեւի մասին: Խնամով խորհրդածելէ ետքը միաբանեցան յայնմ, որ հարկերը դրուին միայն այն բերքերու վրայ, որոնք մարդկան եւ անասուններու անհրաժեշտ սնունդն են, այսինքն՝ ցորեն, գարի, բրինձ, որթատունկ, մարախան առուոյտ, արմաւենի եւ ձիթենի: Իւրաքանչիւր գրիւ երկրամասի վրայ, ուր ցորեն կամ գարի ցանուած է, նշանակեցին մէկ դրամ հարկ. իւրաքանչիւր գրիւ այգւոյ վրայ՝ 8, իւրաքանչիւր գրիւ մարախան առուոյտի վրայ՝ 7. ամէն 4 պարսկական արմաւենի՝ 1 դրամ, 6 սովորական արմաւենի՝ նոյնքան. այսպէս ալ ամէն 6 ձիթենի: Արմաւենուց համար նշանակուած հարկը կ'արժէ մեծաքանակ կամ մեծաթիւ քովի տնկուած տունկերու համար. ապահարկ են ցրիւ տնկուածները: Այս յիշուած 7 տեսակներէն դուրս գտնուած միւս բոլոր բերքերը ապահարկ թողուցին, որպէս զի մարդիկ դիւրաւ սնունդ գտնեն:

Գլխահարկ գրին ամէնուն վրայ, դուրս հանելով ազատները, մեծամեծները, զինուորները, քահանաները, դպիրները (նոտարները). եւ այն ամէնքը, որոնք արքունի ծառայութեան մէջ են: Այլ եւ այլ դասեր գանազանեցին՝ 12, 8, 6 եւ 4 դրամ վճարողներ, ըստ առաւել եւ նուազ կարողութեան մարդկան: 20էն վար եւ 50էն վեր տարիք ունեցողները ազատ էին գլխահարկէ: Այս որոշումները գրին Խոսրովի առաջ. եւ նա հաստատեց. հրամայեց որ ի գործ դրուին եւ ըստ այնմ տարին 3 բաժնով ամէն 4 ամիս անդամ մը, հաւաքուին հարկերը: Զայս անուանեց Խոսրով՝ Աբրաստար (°), որ կը նշանակէ «Բան մը, որով գոհ է առ հասարակ ամէն մարդ»: ...

Ապա հրամայեց Խոսրով, որ հարկերու նկատմամբ եղած որոշումները գրի առնեն եւ անոնց պատճենները բազմացնեն. մէկը պահեց իր զիւանին մէջ. մէկ մէկ օրինակ ուղարկեց իր հարկահաւաքներուն, որպէս զի ըստ այնմ ընթանան. մէկ մէկ օրինակ ալ գրիկեց շրջանի դատաւորներուն: Ասոնց հրամայեց որ միտ դնեն, որ իրենց մարդին մէջ

գտնուած գործակալները աւելի հարկ չպահանջեն ժողովրդենէն, քան որ նշանակուած է ցուցակին մէջ, որմէ օրինակ մը դրուած է իրենց տրամադրութեան տակ: Հրամայեց նաեւ, որ եթէ մէկուն հունձքը կամ որ եւ է (հարկեալ) պտուղը արկածի մը հանդիպի, վնասին համեմատ ազատ ընեն հարկէ. դարձեալ, թէ վախճանեալներէ եւ 50 տարեկանէն վեր եղողներէ գլխահարկ չվերցնեն: Անոնք կը պարտաւորուին այս ապահարկութեանց մասին իրեն զեկուցում տալ, որպէս զի ինքն ալ ըստ այնմ հրահանգ տայ հարկահաւաք գործակալներուն. նմանապէս հրամայեց որ միտ դնեն, որ գործակալները 20 տարեկանէն վար եղողներէն գլխահարկ չպահանջեն»:

Կը յայտնէ Տարարի (246—247), թէ «այս այն որոշումներն են, որոնց Օմար ի. Խատտար, երբ պարսկական երկիրները նուաճեց, հետեւեցաւ եւ հրամայեց որ անոնց համեմատ հարկ դնեն տեղացիներու վրայ, այս տարբերութեամբ որ ամէն մէկ գրիւ վարելահողի վրայ ըստ իւր արդիւնաբերութեան, նոյնպէս մշակելի հողի եւ մէկ գրիւ ցորենի հողի վրայ մէկ կամ երկու կապիճ ցորեն դրաւ, զոր կը գործածէր բանակը պարենաւորելու: Ուրիշ կէտերու մէջ պահպանեց Օմար՝ մասնաւորապէս Իրաքի մէջ, այն բոլոր որոշումները, զորոնք դրած էր Խոսրով գրիւ վարելահողի, արմաւենուց եւ ձիթենուց վրայ. եւ այն սննդանիւթերը, զորոնք Խոսրով ապահարկ ըրած էր, ինքն ալ ապահարկ ըրաւ»:

Զինուորութեան կամ բանակի կազմութեան նկատմամբ կը հաղորդէ Տարարի պարգապէս թէ «Խոսրով Պապակ անունով դպիր մ'ունէր, որ Բերաւանի (°) որդին էր... իրեն յանձնեց կազմել բանակին ցուցակը»: Դժբախտաբար Տարարի այս տեղ գրուցախառն պատմութեան քերական անձնատուր ըլլալով՝ չի տար մանրամասնութիւններ զինուորական կարգի նկատմամբ եղած որոշումներու մասին:

«Հողահարկի կանոնաւորումը, կը գրէ Նէօլդեկէ²⁹, զոր սկսած էր Կաւատ եւ ի գլուխ հանեց Խոսրով, եւ այն միջոցները, զորոնք ձեռք առաւ՝ վերահսկելու հարկահա-

հանութեան վրայ, անշուշտ ձեռնտու եղաւ հաւասարապէս թէ հպատակներուն եւ թէ արքունի գանձարանին: Այն կարգադրութիւնները, զորոնք սահմանած էր Խոսրով հարկահանութեան համար, գոնէ դրամական տեսակէտով ծանր չէին զգացուած, նոյն իսկ արեւելեան հանգամանքներու համար ամենակարեւոր մէկ գաւառի՝ Բարբլոնի (Իրաք) մէջ մինչեւ Սասանեան պետութեան կործանումը. ընդհակառակն պետութեան համար նոյն իսկ շատ արդիւնաւէտ նկատուած էին: Այս մասին ունինք մենք Արաբներու անժխտելի վկայութիւնը, որոնք խօսելով մահմեդական շրջանի հարկերու ծանրութեան վրայ, մի եւ նոյն ժամանակ տէրութեան պարսկական վիճակին օրըստօրէ վատթարանալը կը շեշտեն, համեմատելով պարսկական ժամանակին հետ»:

Եղիշէի եւ Տարարիի հաղորդած տեղեկութիւններու համաձայնութիւնը ակնհայտ է: Մանրամասնութիւնները պիտի տեսնենք:

Կարեւոր է այժմ մեզի, զիտնալ թէ ե՞րբ ի գլուխ ելաւ աշխարհագիրը իր վերջին ձեւին մէջ: Տարարի զայն Խոսրովի գահակալութեան օրով կը նշանակէ: Նէօլդեկէ եւ ուրիշներ լուծեամբ կ'անցնին այս կէտի վրայէն:

Աշխարհագիրն գլխաւոր ձգտումն էր ապահովել պետական ծախքերը: Արդէն Պերոզի թագաւորութեան օրերէն սկսեալ կը հեծէր պարսկական պետութիւնը գանձարանին սնանկութեան պատճառաւ: Այնպէս եւ Հոնաց դռներու պահպանութիւնը կը պահանջէր անչափ գումար: Պերոզ, ապա Կաւատ եւ Խոսրով ստէպ ստէպ կը դնէին կայսեր առջեւ անհրաժեշտ հարկը՝ այս երկու գոնեքու պահպանութեան համար տրամադրել իրենց գրամական կամ զինուորական միջոց: Կաւատի հրատարակած պատերազմը Հոսովայեցոց դէմ կը հետապնդէր գլխաւորաբար բռնի ստիպել Կայսրը, որ յանձն առնէ վճարել այս նպատակին համար տարեկան որոշ գումար մը: Բաց աստի 484ին Պերոզի կրած ահաւոր պարտութեան հետեւութեամբ ամբողջ Պարսկաստանը հարկատու եղած էր Հեփթաղներուն: Մինչեւ 545 պարտաւոր էին Պարսիկները իրենց այս ոխերիմ թշնամուցն ահագին գումարներ վճարել: 541—552 տարիներուն մէկ կողմէն Հոսովայեցոց եւ միւս կողմէն Հեփթաղներու դէմ

²⁸ Գրիւ (գրուան), պ. girib, առ. geriba, արկացուցաւ չափին տարողութեան համաձայն սերմանումը վարելահողի տարողութեան: Արաբական ազգերնեքու համաձայն 1 գրիւ 3600 քառակուսի կանգուն էր. համար. Tabari-Nöldeke, 242, ծան. 2. Աճառեան, Արամասական բանարան, Գ. 355—356:

²⁹ Հմմտ. Արարատ, 1895, էջ 472:

ձեռնարկուած պատերազմները պահանջեցին պետական գանձարանէն նոր գումարներ: Հռովմայեցւոց երկրէն բերուած աւարամասերը հաղիւ թէ դոցէին այն ծախքերը, որոնք հիւսիսային Վրկանի մէջ հաւաքուած անթիւ զօրաց պահպանման եւ ամբողջութիւններու կառուցման համար կարեւոր էին: Արքունի գանձարանին գլխաւոր ազդերն էր հարկը, որ կը գանձուէր ժողովրդեանէն:

Հարկահաւաքութեան անկանոնութիւնը նկատած էր արդէն Կաւատ, եւ իւր թագաւորութեան վերջին տարիները մշակած էր ծրագիր, կանոնաւորելու զայն հաստատօրէնքներով. բայց չէր ունեցած ժամանակ ի գլուխ հանելու իւր կենդանութեան: Այդ ծրագիրը թագին հետ ժառանգեց Սոսրով: Իր թագաւորութեան առաջին քսան տարիներուն չունեցաւ սակայն Սոսրով անդորրութիւնը, իրագործելու հարկային դրութեան բարեձեւութիւնները: Բոլոր ժամանակ զբաղած էր կռուի պատրաստութիւններով եւ պատերազմներով: Հասուն խորհրդով եւ ամուր բազուկով կարող էր պարագլխի նման հարցերով միայն 551էն վերջը, երբ Հռովմէական սահմանին վրայ զինադադար կ'իշխէր եւ հիւսիսային ազգերը զսպուած էին:

Այս խաղաղութեան եւ բարօրութեան օրերը կ'աւետէր Սոսրով իւր թագաւորութեան ԻԱ. տարւոյն (551/2). «Եւ իբրեւ ետես, կը գրէ Եղիշէ, Եթէ... յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա... յաջողեցաւ տէրութիւն նորա, աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուչանս աշխարհին իւրոյ, ցլուք սպիտակօք եւ գիսաւոր նոխաօք առատացոյց զգոհս կրակին, եւ խիտ առ խիտ թանձրացոյց անդադար զպաշտօն պղծութեան իւրոյ (°). պսակօք եւ պատուովք մեծարեաց զբազումս ի մոզաց եւ զբազմազոյնս ի մոզպետաց» (Ա. 11):

Ահա այն տարին, երբ հրատարակուեցան նաեւ հարկահանութեան նոր օրէնքները. եւ Դենչապուհ ուղարկուեցաւ Հայաստան օրինաց պատճենը ներկայացնելու Հայաստանի մարզպանին (Նիխորականի°ն) եւ հարկահանութեան նոր կարգերը պարտաւորիչ ընելու երկրին բնակչութեան:

Նիխորականին ուղղուած արքայական հրովարտակի մը սկզբնաւորութիւնը յառաջ կը բերէր Տարբի (§ 31). անոր բովանդակու-

կութիւնը շատ հաւանական է որ շօշափած ըլլար հարկերու բարեփոխութեան հարցը:

Այս ժամանակագրութիւնը ճշգրտու համար ունինք հաստատուն ստեղծիւ Եղիշէի այն պարբերութեան մէջ, ուր կը յիշէ թէ Դենչապուհ «զողջոյն բերեալ զմեծ թագաւորին» «խաղաղասէր կեղծաւորութեամբ» կը ծանուցանէ ժողովրդեան նոր կարգադրութիւնները «ի թողութիւն (Իմա՛ ի թուութիւն) հարկաց եւ ի քեթեւութիւն ծանրութեան այրուածիցն»:

Տեսանք վերագոյն (§ 32) թէ կար հայկական հեծելազօրք. բայց թէ այդ հեծելազօրքը մեծաթիւ էր եւ ստէպ ստէպ կռուի կը հրաւիրուէր, այնպէս որ զգացուէր «ծանրութիւն այրուածից», չկար ակնարկութիւն: 449էն յառաջ անգամ մը դտնուած էր հայկական այրուածին հեռաւոր Վրկանի մէջ. երկրորդ անգամ կը յիշուի հայ հեծելազօրքին կռուի մասնակցութիւնը 501/2ին, երբ Կաւատի բանակին կից կը կռուին իբրեւ «նիզակակից» Հռովմայեցւոց դէմ: Յաջորդ տարիներու պատերազմներուն չէին մասնակցած հայերը մինչեւ 545:

Ոնցիւրը փոխուեցաւ 545ին, երբ Սոսրով դեռ Հռովմայեցւոց հետ խաղաղութիւն չէինքս՝ ստիպուեցաւ Հեփթաղներու դէմ ճակատ կազմել եւ հիւսիսային սահմաններու վրայ երկար ժամանակով բանակ կենդրոնացնել: Այժմ պէտք ունէր նիզակակից դժբերու. եւ հարկ եղաւ ընդհանուր զօրակոչ հրատարակել իւր լայնածաւալ պետութեան սահմաններէն ներս: Զօրակոչի հրովարտակը տեսանք վերագոյն (§ 25): Հոս ի մէջ այլոց կը գրէր Սոսրով, մասնաւորելով խօսքերը Հայաստանի եւ զբացի երկիրներու համար. «Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ» կռուեցայ Հռովմայեցւոց հետ. իսկ այժմ «մեք ի մտի եղաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհն Արեւելից (հիւսիսային Վրկան) ... դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշաց (Հեփթաղաց): Դուք իբրեւ զհրովարտակս զայս տեսանէք, անխափան վաղվազակի այրեւծի գումարեցէք առաջի քան զիս, յանդիման լերուք ինձ յԱպար աշխարհին»: Հրամանը ի գլուխ ելաւ: Սոսրով իր նորակազմ բանակով «խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն, եւ զերկեամ մի կռուեալ՝ ոչինչ կարաց ազգել նոցա: Ապա արձակեաց

զմարձիկս յիւրաքանչիւր տեղիս, եւ գայլս ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ: Այսպէս ամ յամե սովորութիւն կարգեաց... սկսեալ ի Դ (Իմա՛ ԺԴ = 545) ամէ տէրութեանն իւրոյ մինչեւ յամս ԺԱ. (Իմա՛ ԻԱ = 551/2) թագաւորութեանն» (Եղիշէ, 9—11):

Թէ իրօք հայ այրուածիւ մասին է հոս Եղիշէի խօսքը, կը տեսնուի նաեւ հետեւեալ տեղիքէն, ուր կ'ըսուի. «անդէն ի ներքոյ պահ դրանն արգելոյր (Սոսրով) զբազմութիւն այրուածիցն Հայոց եւ զՎրաց եւ զԱղուանից» (էջ 16):

Այսպէս ութը տարի շարունակ, 545—552, ոտքի վրայ մնաց հայ այրուածին, պատերազմի դաշտի վրայ, հեռաւոր Վրկանի մէջ. եւ այն որ ամէն տարի նոր զօրակոչ կ'ըլլար, ինքնին հասկանալի կ'ընէ, թէ որչափ ծանր զգացուած պիտի ըլլայ ժողովրդեանէն զօրակոչը եւ առ հասարակ «ծանրութիւն այրուածիցն», հետեւաբար ո՛րչափ ուրախութեամբ ընդունուած պիտի ըլլայ թագաւորին ողջոյնը, որ «զթեթեւութիւն ծանրութեան այրուածիցն» կ'աւետէր իրենց:

Եթէ ուղիղ է Եղիշէի յայտարարութիւնը թէ Դենչապուհ միանգամայն հրատարակեց աշխարհագիրն՝ թուլութիւնն հարկաց եւ թեթեւութիւնն ծանրութեան այրուածիցն, պէտք է այն ատեն հարկային օրէնքներու ծանուցումն ալ 552ին նշանակել:

Դենչապուհի առաքման հետ պէտք է կապել այն «երեք հաւատարիմ իշխաններու» այցելութիւնը, որոնք թագաւորի կողմէն Հայաստան եկան, քննելու պարսիկ գործակալներու արարքները³⁰, որոնց մասին երկրէն գանգատ հասած էր Սոսրովի: Այս նկատմամբ կը կարդանք Ս. Յիզատիրուզիտի վկայարանութեան մէջ կարեւոր տեղեկութիւններս³¹. «Յայնմ ժամանակի լուեալ թագաւորն զբազում բռնութիւն եւ զտառապանս, զոր հասուցանէին աշխարհին Հայոց գործակալքն, առաքէր երիս իշխանս հաւատարիմս՝ այց առնել երկրին. անուն միունն Նատոյ, որ կոչի Դրովանդական³², եւ երկրորդին՝ Պերոզ, որ էր Ռէոյ գաւառին մոզպետ. եւ երրորդին՝ Սոյապ, որ էր սպասաւոր արքային. որք եկեալ ի Հայս՝ բազում ուղղութիւնս արարին»:

Քննիչ մարմինս Դուին հասած է 553, Նոյեմբ. 9էն յոռաջ. այս օրը նահատակուեցաւ Ս. Յիզատիրուզիտ Պերոզ մոզպետի դատակնքով:

Վկայագրին կարճառօտ խօսքը թէ յիշեալ Քննիչները «բազում ուղղութիւնս արարին» շատ մանրամասնութեանց կարօտ կը թողու զմեզ: «Բազում բռնութիւնք եւ տառապանք», զոր «հասուցանէին աշխարհին Հայոց գործակալքն» կ'ենթադրեն երկար տարիներ, որոնք պատերազմի շրջանին կը վերաբերին հաւանօրէն:

Քննիչ մարմնոյն ըրած «ուղղութիւններու» թուին մէջ հաշուելու է անշուշտ նաեւ այն արտօնութիւնը, որով իրաւունք կ'ունենային հայ եպիսկոպոսներն եւ ազատները յաջորդ տարին (554) համաշխարհական ժողովի նստիլ: Ինչպէս Ներսէս Կաթողիկոս կը խոստովանի, ժողովոյն նախապատրաստութիւնները տեսնուած էին նախորդ տարին³³, ուստի 553ին, երբ դեռ Դուին էին թագաւորին լիազօրները:

Ուշագրաւ է ժողովոյն որոշումը: 554, ծաղկազարդին (29 մարտ), ժողովի կը նըստին Հայոց եպիսկոպոսները, տանուտեարք եւ ազատք, քննելու Սուսիկ Նեստորականներու խնդիրը, «վասն անիծեալ Սուսիկաց Նեստորականաց, որ եկեալ բնակեցան յաշխարհս»:

³² Նատոյ հաւանօրէն նոյն է Նածոնցի հետ, որ բոս Մենանդրի (էջ 318. անուանս մասին հմտ. Nöldeke, Persische Studien, էջ 11, 22) Հայաստանի մէջ զօրավար էր եւ 576ին իբրեւ դեսպան ուղարկուեցաւ Յուստինոս Բ.ին: Դրովանդական յորջորջանքը P. Peeters (Acta Sanctorum, Novemb. IV, 197, ծ. 5) կ'ուզէ իմանալ իւր Դերբեդական, այս ինքն Դերբեդը շահաստանի անունով տիրողստուած:

³³ Հմտ. Գիրք թղթոց, էջ 70—71. «Տեսան Ներսէսի Հայոց Կաթողիկոսի թուղթ մեղադրութեան սո եպիսկոպոսներն» հարաւակողման Հայաստանի, այսինքն Արժրուանեաց, Ռշտունեաց, Մոկաց, Անձեւայեաց, Ակէոյ, Պալուսեաց, Զարեհաւանից, Բժնունեաց եւ Մհհունեաց, որ կ'ըսուի թէ «յառաջագոյն վասն նորին իրաց մեք եւ աշխարհիս մերոյ աստուտեարք եւ ազատք միարանութեամբ ի ձեռն զրոյ հրաման արարաք վասն ձեր՝ փութապէս ի Դուին ի սուրբ եկեղեցիս ժողովելոյ»:

³⁰ Կը պտտմէ Դինաւարի, թէ Սոսրով ուղարկեց պետութեան այլեւայլ կողմեր 13 հաւատարիմ մարզիկ քննելու իմանալու թէ ինչպէս կը վարուին գործակալները ժողովրդեան հետ: Անոնք վերագործին պատմեցին թագաւորին թէ գործակալները շատ աւերաւ գործեր կը գործեն: Ասոր վրայ Սոսրով այդ գործակալներէն 90 անձ զլիստեւ տուաւ, իսկ մնացեալներուն պատուէր զրկեց որ իրենց յանձնուած գործակալութիւնները արգարութեամբ վարեն. Nöldeke-Tabari, էջ 251, ծան. 1: Հմտ. նաեւ էջ 451, ուր կ'ըսէ Նէօլդեկէ թէ այսպիսի քննիչ մարմիններ շատ անգամ կազմուած կ'ըլլային մոզպետներէ եւ աշխարհիկ պատուաւոր անձերէ:

³¹ Վարք եւ վկայարանութիւնք Սրբոց, Բ., էջ 127:

խարհիս մերում՝ պատճառաւ վաճառաչա-
հուլեան. եւ այժմ չարահնար, պղծալից,
անիծարբեր արուեստիւ իւրեանց յողիս մեր
աղղեցին. մինչեւ իւրեանց պղծութեան հա-
ւատոյ առաջնորդ չեպիսկոպոս անեալ եւ
մեզ լուսաւոր եւ ուղղափառ, հաստատուն
հաւատոյս խոչընդակն կացուցանել»։ Չա-
րիքը կը համարուի «անհնարին աղէտք եւ
հանապազորդ հեծութիւն հոգւոց մերոց»
(70)։

Խօսքը Խուժաստանէն Դուին եկած Նես-
տորական վաճառականներու մասին է, որոնք
548ին, Նիխորականի մարգարանութեան օրե-
րուն իրենց համար ժողովարան մը կառու-
ցած էին յանուն Գրիգոր Մանածիւհր Ռաժիկ
վկային († 541)։ Կը բերեն «վարդապետս»,
որոնց թուին մէջ կը գտնուի նաեւ եպիսկո-
պոս մը։ Ոչ միայն աղօթատեղի մը կ'ըլլայ
տաճարը, այլ եւ Նեստորական վարդապե-
տութեան քարոզութեան բոյն։ Իրենց քարո-
զութեանց կը գտնուին հետեւողներ նաեւ
հայ քաղաքացիներէն (73)։ Այս չարիքը հիմ-
նովին արմատախիւ ընելու միակ միջոցը կը
նկատուի քակել ժողովարանը։ Որոշումը ի
գլուխ կ'ելլէ։

Ուշադրութեան արժանի է, որ Ս. Յիզ-
աիրազիտի վկայարանութեան մէջ ալ կը յի-
շուի թէ ի Դուին Քննիչ յանձնաժողովի
կողմէն Խուժիկ մը կը դատապարտուի մա-
հուան. յայտնի չէ ի՞նչ յանցանքով։

Մի անգամ հիմնարկուած ժողովարանի
կամ մատուռի մը քանդման համար պէտք
կար, պարսկական օրէնքի համաձայն, վե-
րին իշխանութեան հրամանը³⁴։ Հաւանական
է կարծել, թէ Ներսէս Աշտարակեցի առ այս
ստացած էր կանխաւ Քննիչ մարմնոյն հա-
ւանութիւնը։ Այս գործին մէջ, ինչպէս
կ'երեւայ, նուազ դեր չէր խաղացած Արդի-
չոյ, Սասնոյ կողմանց ասորի միարնեանե-
րու եպիսկոպոսը, որ Ներսէսէն էր ձեռնա-
դրուած, եւ անձամբ ներկայ էր ժողովին։

Հարկերու փոփոխութիւնը, որուն նպա-
տակն էր թէ ժողովրդեան բարեկեցութեան
նպաստել եւ թէ արքունի դանձարանը հարբս-
տացնել, կ'երեւայ Եղիշէի տողերէն, թէ
Հայաստանի համար մասնաւոր թեթեւութիւն
չբերաւ։

Կամ որովհետեւ, գոնէ Հայաստանի մէջ՝

³⁴ O. Braun, Das Buch der Synhados, 149—150։

հին արչակունեան հարկահանութեան ձեւը
աւելի մեղմ էր եւ նպաստաւոր, եւ կամ գոր-
ծակալները կ'անիրաւէին, չափէն աւելի պա-
հանջելով տուրքերը։ Ինձ կը թուի թէ եր-
կու տեսակէտներն ալ կային։ Կը վկայեն հայ
նախարարները, թէ «հասք մտից եւ սակից
եւ որ այլ եւս էին հարկք աշխարհիս բազ-
մագոյն քան առ հարբն քով երթային յար-
քունիս»։ Ուստի համեմատութեամբ նախնա-
կանին հոս բազմապոյն է ստացուած գու-
մարը։ Այս առաւելութիւնը սակայն կարող
էր անդալի ըլլալ հարկատուներուն՝ շնոր-
հիւ հարկատուութեան ձեւին. եւ այս իմաս-
տով պէտք է հասկնալ պատմագրին տողերը
թէ «հհարկ աշխարհին առաւել ծանրացոյց»։
Միւս կողմէն կը շեշտէ Եղիշէ թէ «ոչ ըստ
արքունի արժանաւորութեան առնուին, այլ
հինարար յախշտակելով», որուն օրինակ կը
բերէ թէ «ուստի արժան էր առնուլ հարիւր
դահեկանաւ չափ, կրկին առնուին»։

Պետական օրէնքը կը տարածուէր վարե-
լահողերու վրայ. իսկ պողատու ծառերէն
հարկի առարկայ կ'ըլլային միայն արմաւե-
նիներն եւ ձիթենիները։ Ասոնք Հայաստանի
մէջ դոյութիւն չունէին։ Ուստի անիրաւ է՛
«լերանց, դաշտաց եւ մայրեաց» վրայ տա-
րածել հարկերը, եթէ որ այդ «լերանց եւ
դաշտաց» վրայ այդի կամ արտորայ չէ՛
ձգուած։

Օրէնքը կը սահմանէր գլխահարկ. այս
մասին թէպէտ բացայայտ չի խօսիր Եղիշէ,
բայց անով որ «եպիսկոպոսաց, երիցանց եւ
միայնակեցաց» վրայ նշանակուած հարկերը
կը յիշէ, լուրջայն կը յայտնէ թէ կար գլխա-
հարկ մըն ալ։

- Օրէնքին համաձայն հարկէ ազատ էին՝
- ա. Ազատները.
- բ. Զինուորները.
- գ. Պետական ծառայութեան մէջ գտնու-
ողները.
- դ. Քահանայութիւնը։

Այս կէտերը յետոյ Արարացիներն ալ
ապահարկ նշանակեցին, ինչպէս կը գրէ Սա-
մուէլ Անեցի. «Եւ անմոռաց երդմամբ կնքեաց
(Մուաւիա) մուրհակ Հայոց աշխարհիս՝
համարձակ ունել զքրիստոնէութիւնն... իսկ
ի քահանայից եւ յազատաց եւ ի հեծելոց ոչ
էրաւայեաց առնուլ զհարկն» (էջ 82). Թէ եւ
այս իրողութեան անձանօթ կ'երեւան Սե-
րիոս եւ Ղեւոնդ։

Ի՞նչպէս պէտք է հասկնալ Եղիշէի խօս-
քերը այս մասին. «Ձաղատութիւն եկեղեց-
ւոյն արկանէր ի ծառայութիւն»։ «Միայնա-
կեացք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ
նովին աշխարհագրաւ հարկ»։ «Սոյնպէս եւ
եպիսկոպոսաց եւ երիցանց (ի վերայ հարկս՝)
զնէին, ոչ միայն շինաց, այլ եւ աւերա-
կաց³⁵»։ Նախարարներու բերանը կը դրուի.
«Նաեւ զսուրբ Եկեղեցին, որ էր ազատ ի
Քրիստոս ըստ կարգի նախնեաց մերոց ի
սկզբանէ, եւ դու ընդ հարկաւ եղիր»։

Դենչապուհ ո՛չ իւր կամքով, ինչպէս
թերեւս իմացուի պատմագրին արտայայտու-
թենէն, այլ թագաւորի հրամանաւ այսպէս
կը բացատրէ օրէնքը։ Ուստի յաջորդ խօս-
քերը նոյնպէս թագաւորին կը հային. «Եւ
զայս ամենայն առնէր, (զի) թերեւս զմիա-
բանութիւնն քակեսցէ եւ զուխան եկեղեցւոյն
ցրուեսցէ եւ զմիայնակեացս փախուսցէ եւ
զլինականն վատնեսցէ եւ (զի մարդիկ) առ
յոյժ աղքատութեանն ակամայ դիմեսցեն յօ-
րէնս մոզուց»։

Թէ ի՞նչ չափով սեղմուած էր Եկեղեց-
ւոյ ազատութիւնը, թոյլ չեն տար յառաջ բե-
րուած տեղիքներս կուհեւ ճշդիւ։ Յետին
պարբերութիւնը՝ «առ յոյժ աղքատութեանն
ակամայ դիմեսցեն յորէնս մոզուց» ցոյց կու-
տայ — եթէ այն Եղիշէի հարազատ է — թէ
օրէնքը զանազանութիւն դրած է պարսիկ
մոզերու եւ քրիստոնեաց քահանաներու մէջ։

Իրողութեան մասին թեթեւ գաղափար
մը կաղմելու համար լոյս կը ցոլացնէ 645ին
Ներսէս Շինողի օրով ի Դուին գումարուած
ժողովին թ. կանոնը³⁶. որ այս շրջանի՝
Խոսրով Ա.ի հարկային օրէնքը կ'ակնարկէ.
կանոնին խօսքերն են.

«Յորժամ ազատք զիւրեանց երդ եւ
զմարդ բաժանեն, յոլովք չարակնութեամբ
առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ ջանան
ի ծառայութիւն եւ ի ստրկութիւն արկա-
նել՝ մոլեալք եւ մոլորեալք ի քրիստո-
նէական հաւատոյս։ Զի երանելոյն Գրի-
գորի եւ սրբոյն Տրդատայ զսուրբ եկե-
ղեցւոյ մանկունս ընդ ազատաց տոհմին են

³⁵ Շատ մութ է պարբերութիւնս, յատկապէս
մութ է վերջին երկու բառերուս իմաստը։ Յ. Մա-
նանդեան կ'իմանայ «երիցունք շինաց եւ աւերակաց».
Ի՞նչ գործ ունէին աւերակներու մէջ երիցունք։ Կար-
գա՞լ «երիցանց շինակաց»։ Հմմտ. քիչ վարը
«Ղիմականս վատնեսցէ»։
³⁶ Կանոնը Դուոյ ժողովոյն, Վաղարշապատ,
1905, էջ 19։

կարգեալ. եւ ազատ էին սրբոյ եկեղեցւոյ
հող եւ ջուր։ Նաեւ ի Պարսից իսկ տէ-
րութեանն յայտ արարեալ եւ չէ խառնեալ
ի շինական. իշխանութեամբ զերիցունեաց
տունսն ի դիւանին եղեալ են, բայց միայն
զհասն տալ յարքունիս։ Արդ եթէ ոք ազա-
հութեան ակամբ հայեսցի եւ զազատ ման-
կունս եկեղեցւոյ ի բաժին եւ ի վիճակ ծա-
ռայութեան արկեցեն, այնպիսիքն ի սուրբ
Լուսաւորչի օրհնութենէն եւ ի մերմէ ժողո-
վոյս հեռի եղիցին»։

Դուոյ ժողովոյն այս կանոնը, որ այն-
պէս սերտ կապուած է Եղիշէի վերայիշեալ
տեղիքներուն հետ, շատ ճարտար բացատրած
է թ. Աւղալբեղեան³⁷. կարեւոր կը համա-
րիմ հոս ամբողջութեամբ յառաջ բերել այս
բացատրութիւնը.

«Դիմի ժողովի այս թ. Կանոնից իմա-
նում ենք, որ Գրիգոր Լուսաւորչի ու Տրդատ
Մեծի օրերից եկեղեցականներն աշուտական-
ների շարքում են դասուած եղել կամ վեր-
ջին դարերի տերմինով ասած՝ նրանք եղել
են մազաֆ, թարխան, որ նշանակում է ա-
պահարկ։ Նրանց ապահարկութիւնը երկու
կողմից էր. հողեւորականները հարկ չէին
վճարում ո՛չ պետութեանն ու ո՛չ էլ տեղա-
կան իշխաններին։ Պարսից տիրապետութեան
ժամանակ, այսինքն բուն իսկ մարգարանու-
թեան շրջանում հողեւորականութեան դրու-
թիւնը խիստ փոփոխութեան է ենթարկվում։
Ինչպէս Եղիշէն է հաղորդում, այս փոփո-
խութեան սկզբնակէտը Ե. [իմա՛ Ձ.] դարի
կէսերին, Դենչապուհի աշխարհագիրն էր,
որից յետոյ Պարսիկները վերացրին եկեղեցու
«ազատութիւնն», այս ինքն իրեցին նրա մա-
զաֆութիւնը, թարխանութիւնն, ապահար-
կութիւնը եւ եկեղեցականներին «արկին ի
ծառայութիւն», այսինքն հարկատու դար-
ձրին։ Եկեղեցու եւ հողեւորականների ա-
պահարկութիւնը վերացաւ, բայց ոչ լիովին։
Նրանք չհաւասարվեցին շինականներին,
որոնք հարկատու էին երկու կողմից, այս-
ինքն հարկ էին տալիս թէ պարսիկ պետու-
թեանն ու թէ հայ իշխաններին։ Ոչ. երիցու-
նեաց դասը «չէ խառնեալ ի շինական իշխա-
նութիւնն»։ Եկեղեցին ու հողեւորականները

³⁷ Թաղէոս Աւղալբեղեան՝ Հաս, սակ ու բաժ
(Հայաստանի անտեսական գարգացման պատմութեան
ինչ-որոնեոի շուրջը). Տ ե գ ե կ ա գ ի ը շ. Խ. Ս. Հ.
Գիտութեան եւ Արվեստի Ինստիտուտի. Ա. (1926),
էջ 54—55։

դրված են արքունի դիւանում, այսինքն զբանցված են դիւանում. իսկ այս սոսկ վիճակագրական տեսական հետաքրքրութիւնից չէ առաջացել. դիւանում գրանցվելուց բըղխում էին հարկային պարտաւորութիւններ պարսիկ դիւանի, այսինքն հարկապետարանի հանդէպ. նրանք պարտաւոր են հարկ տալու, «բայց միայն զհասան արքունի»: Եկեղեցին այլ եւս միանգամայն ապահարկ չէ, ինչպէս որ էր «Երանելի Գրիգորի» ու «Ս. Տրդատի» ժամանակ. սակայն ապահարկութիւնը լիովին չի էլ վերացել. եկեղեցին կիսով չափ հարկատու է, կիսով չափ ապահարկ: Մինչդեռ եկեղեցին երազում էր ելնել կիսահարկ վիճակից եւ նորից հասնել լիակատար ապահարկութեան, հայ իշխաններն, ընդհակառակը ձգտում են ջնջելու նրա կիսապահարկութիւնն էլ եւ ձգելու լիակատար «ծառայութեան» ու «ստրկութեան» մէջ, այն է՝ հարկատու դարձնելու նաեւ իշխանների նկատմամբ: Եկեղեցին ընդունում է, որ պէտք է «զերդ եւ զմարդ բաժանել»: Եկեղեցին դէմ չէ երբ շինականներին են ձգում «ի ծառայութիւն եւ ի ստրկութիւն»: Ո՛չ, այդ պղպէս էլ հարկաւոր է: Բոլորովին այլ բան է, երբ խնդիրը վերաբերում է «եկեղեցու ազատ մանուկներին». սրանց հարկատու դարձնելուն ձգտողները խախտում են ուղղափառութեան հիմքերը՝ «մոլեալք եւ մոլորեալք ի քրիստոնէական հաւատոյց»: ...

«Այս է իմաստը Դմիտրի Թ. կանոնի, որ իբրեւ յտակ հայելի շատ զեղեցիկ ցոլացնելով է. դարի հայ հասարակութեան մէջ դործող ոյժերի — պարսիկ պետութեան ներկայացուցիչների, ազնուականութեան, հոգեւորականութեան ու գիւղացութեան փոխարարութիւնները՝ մասնաւորապէս ցայտուն պատկերացնում է հայ իշխող դասակարգի երկու Փրակցիաների — ազնուականութեան ու հոգեւորականութեան հակամարտութիւնն ու սուր կոխը՝ յանուն անտեսական-հարկային արտօնութիւնների»:

Դուռնոյ ժողովին խօսքերը մերձեցնելով Ձ. գարու երկրորդ կէսի հարկային օրէնքներու տրամադրութեան, պիտի հետեւցնենք որ օրէնքները որչափ ալ ապահարկ կ'ենթադրեն Եկեղեցին, իրականութեան մէջ արտօնութեան համար, իսկ քրիստոնէայ եկեղեցականները մտած են արքունի դիւանին մէջ

եւ հարկատու նկատուած են, տալով «զհասան արքունի». այս ինքն մշակելի հողերու արդիւնքէն մաս մը եւ դիւանահարկ:

Օրէնքին հրատարակութիւնը կ'ենթադրէր թէ հարկերը պիտի հաւաքուին առ այս կարգուած գործակալներէ: Անոնց վրայ վերին հսկող նշանակուած էին «չըջանի դատաւորները», որոնք քահանայական, այսինքն մոգերու դասէն էին, այս պատճառաւ ալ Ֆիրդուսի զանոնք մոգպետ կ'անուանէ:

Այս սկզբունքով անշուշտ ջանք տարաւ Դենչապուհ հեռացնել հայ հազարապետը հազարապետութենէն եւ հայ դատաւորը դատաւորութենէ եւ յանձնել այս գործակալութիւնները պարսիկներու. կը գրէ Եղիշէ. «որ հազարապետ աշխարհին էր... գրգռեալ յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա եւ հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն. եւ միւս եւս մոգ պետ՝ դատաւոր աշխարհին»:

Յիշուած պարսիկ հազարապետն է անշուշտ, որուն մասին խօսք կ'ըլլայ Ս. Յիգատիրոզի նահատակութեան պատմութեան մէջ (հմմտ. § 33): Իսկ մոգպետն, որ դատաւոր կը կարգուի, ըլլայ թերեւս «Պերոզ որ էր Ռէոյ գաւառին մոգպետ», մին այն երեք քննիչներէն, որոնք եկած էին Դուրին 553ին (տե՛ս վերը): Սա կը հարցաքննէ Յիգատիրոզի տը եւ բանտակից ընկերները. եւ մահուան կը դատապարտէ Ս. Յիգատիրոզի տը, Սուժիկ մը եւ հրեայ մը³⁸ (553, Նոյեմբ. 9): Պարսկաստանի մէջ յատուկ իմաստով դատաւորներ էին մոգպետները³⁹: Դենչապուհ զօրութեամբ հարկային օրէնքներու եւ ըստ ընդունուած սովորութեան՝ Հայաստանի դատաւորութիւնն ալ յանձնեց մոգպետի: Ուշագրութեան արժանի է ո՛ր Մարտո-Յիգատիրոզիտ մինչեւ Պերոզի գալլը դատուած էր մարդպաններէն:

Այս բոլոր խնդրոյ առարկայ եղած կէտերու անդրազոյն լուսարանութիւնը պիտի յաջողէր մեզի, եթէ առ ձեռն ունենայինք այն աղբիւրը, ուսկից առած է Ասողիկ «Դենչապուհ մարդպանի» անունը: Ինձ կը թուի թէ Ասողիկ առ այս աչքի առաջ ունեցած է Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսի Պատմութիւնը կամ անոր գրած Ս. Յիգատիրոզիտի վկայա-

³⁸ Վարք եւ վկայարանութիւնք Սրբոց, Բ., էջ 129:
³⁹ Nöldeke-Tabari, էջ 451:

բանութիւնը, որմէ հատուած մը միայն ծանօթ է ինձ:

Անհնարին չէ մտածել, թէ Դենչապուհ, եթէ իրօք իբրեւ մարդպան եւ ոչ պարզապէս իբրեւ «հաւատարիմ ծառայ» Սոսրովի Հայաստան եկած է, ինչպէս կը հաւաստէ Եղիշէ, նոյն ըլլայ Նախապետի հետ, զոր կը յիշէր Ս. Յիգատիրոզիտի վկայագիրը (§ 31) պատուոյ անունովը: Յամենայն դէպս Դենչապուհի գործունէութիւնը պէտք է զետեղել 552ին կամ անկէ քիչ ետքը. ի հարկէ արքայի «հաւատարիմ» գործակալ մը կարող էր ժամանակ մը վերջը նաեւ իբրեւ մարդպան երեւցած ըլլալ նոյն մարդին մէջ:

Մեզի համար կարեւորն է այն, որ աշխարհագիրը, որուն մասին կը խօսի Եղիշէ, տեղի ունեցած է Սոսրով Ա. Անուշուրուանի օրով իբր 552ին:

Հայաստան կը նկատուէր մասնաւոր նահանգ պարսկական պետութեան. ունէր իւր մարդպանը, հարկերու «դիւանը». անշուշտ նաեւ «չահրմարը», այս ինքն նահանգական հարկահանը: Այս դիւանէն կը հոգացուէր այրուծիոյն ոռոճիկը: Կենդրոնատեղն էր Դուրին շահաստանը:

Հարկերու մասին սահմանուած կարգադրութիւններու հետ անձուկ աղբիւսի մէջ է Սիւնեաց աշխարհի Դուռնոյ դիւանէն անջատուելու եւ Փայտակարանի դիւանին ենթակուելու միջոցաւ, որուն մասին կը գրէ Սեբեոս (էջ 26). «Յայնժամ յառաջ քան զայս — այս ինքն 572 տարույ դէպքերէն յառաջ — ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց. եւ խնդրեաց ի Սոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դուռնայ ի Փայտակարան քաղաք. եւ կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի. զի մի եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն»:

Սոսքին միտքն է. Սիւնիք, որ մինչեւ այժմ իր հարկերը կը վճարէր Դուռնոյ դիւանին եւ կ'առնէր անկէ իւր այրուծիոյն ոռոճիկը, կը խնդրէ Սոսրովէն, որ այսուհետեւ — անշուշտ հարկերու օրէնքը հրատարակուելէն ետքը — անջատուի Դուրինի դիւանէն եւ ենթարկուի Կասպից ծովու եզերքը, Նրասիի ծով թափելու կէտին վրայ շինուած Փայտակարան քաղաքի դիւանին, եւ վերաբերի Ատրպատականի շահրմարին, այսինքն

նահանգական հարկահանին: Այս խնդրով յանձն կ'առնէր Սիւնիք պատերազմի դէպքին ալ իր այրուծին փոխանակ Հայաստանի բանակին սպարապետութեան դրօշին տակ գումարելու՝ դնել Ատրպատականի «մեծ իշխանին» կամ պարսիկ սպայապետի հրամանին տակ: Բնականաբար անջատողական այս ձգտումը պիտի դատուէր ազգայնականներէն «ապստամբութիւն» հայկական միութենէն: Սոսրովին հաճելի էր Վահան Սիւնեոյ առաջարկութիւնը եւ տուաւ իր հաւանութիւնը:

Դժբախտաբար ճշդիւ չէ նշանակած Սեբեոս Սիւնեաց ապստամբութեան ճիշդ տարին, որ կարեւոր էր մեր ուսումնասիրութեան համար: Բայց եւ այնպէս պատմագրին արտայայտութենէն բացորոշ կը տեսնուի թէ դէպքը տեղի ունեցած է 572էն յառաջ: Ուրիշ տեղ⁴⁰ առիթ ունենալով ընդարձակ խօսիլ այս ապստամբութեան մասին, ժամանակը ամփոփած էի 557|558 տարույն, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսի մահէն (իբր 558) յառաջ: Այժմ յեցած հարկերու նոր դրութեան կամ «աշխարհագրի» վրայ, կարող ենք դէպքը զետեղել 552էն ետքը եւ 557էն յառաջ: 554ի Դուռնոյ «համաշխարհական» ժողովին չէր մասնակցած Վահան Սիւնեաց տէրը, թէեւ ներկայ էր հոն Սիւնեաց եկեղեցւոյն գլուխը՝ Պետրոս եպիսկոպոս: Ուստի կարելի է մտածել թէ Սիւնեաց աշխարհի քաղաքականապէս Հայկական միութենէն անջատման չէ զուգադիպած եկեղեցական բաժանումը:

Եղիշէի խօսքը թէ Դենչապուհ «բանսարկութեամբ էարկ գնախարարս ընդ միւսնաւս եւ յամենայն տան արար խոռովութիւն» կարող է հեռաւոր ակնարկութիւն մ'ըլլալ Սիւնեաց ապստամբութեան մասին: Առ այս պէտք է նկատի առնել նաեւ Ասողկան այն հակիրճ տողերը ուր յիշելով Դենչապուհը կը գրէր. «որ զըմուռութիւնն շատացայց... ստիպէր զքրիստոնէայս կրակի երկիր պաղանել» եւն: «Յամենայն տան արար խոռովութիւն» եւ «զչմոլութիւնն շատացոյց» գաղափարակից աստիճաններ կը թուին ըլլալ. եւ Եղիշէի կասկածը թէ հարկերու ծանրութեամբ Դենչապուհ գաղտնի նպատակը կը հետապնդէր ժողովուրդը «յօրէնս մոգուց»

⁴⁰ Թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս Սիւնեաց եպիսկոպոսապետ. վրէնսա 1930, էջ 51—55:

յորդորել, կարծես թէ կ'արդարացնէ Աստուղիկ: Այս կէտին պիտի անդրադառնանք յետոյ առանձին:

Աշխարհագրիս հետ կապ ունի նաև Հայոց քուակահանի սկզբնաւորութիւնը, որ ճշգրիտ 552, Յուլիս 11ին կ'իյնայ:

Ինչպէս տեսանք վերագոյն, հարկերու նոր օրէնքին հրատարակութիւնը տեղի ունեցած է 552ին, եւ ինչպէս բնական է մտածել՝ հաւանօրէն նոյն տարւոյն Փարսարդին (Նաւրուզ) ամսոյն, որուն սկիզբն է Յուլիս 6, երբ կը սօսուէր տարեգլուխ եւ թոսրովի դահակալութեան ԻԲ. տարեդարձը:

Որովհետև հարկահանութեան նոր օրէնքները կը սահմանէին, որ տարեկան հարկերը գանձուէին երեք ժամանակամիջոցներու մէջ՝ չորս ամիս մէկ անգամ, պարտաւոր էին դպիրները իւրաքանչիւր ժամանակամիջոցի մուտքերը եւ բաց մնացած հարկերը ճշգրիտ անցնել գիւմնին մտից մատենին մէջ եւ հսկել տարեկան կշիռին վրայ: Այս անտեսական պայմանները կը թելադրէին հարկաւ, որ երկրի մը մէջ, ուր չկար մինչեւ այն ժամանակ անտեսական տարի հաստատ քաղաքական թուականով, սկիզբ ըլլար նոր թուականի մը, հիմ առած հարկերու գանձման առաջին տարին (552 Յուլիս 6):

Այս անտեսական-հարկային տարւոյն ելակէտը պիտի բնորոշէր Հայաստանի մէջ 552, Յուլիս 11, երբ կ'իյնար հայկական տարւոյն տարեգլուխը՝ Նաւասարդ ամսոյն 1:

Կը կարծեմ թէ այս ենթադրութեամբս կը գտնէ Հայոց թուականը իւր սկզբնաւորութեան բնական եւ անտեսական պատճառը: Պատահական կամ կամայական չէ անշուշտ, երբ հին յիշատակագիրներէն ոմանք Հայոց թուականը «Պոսրովային թուական» կ'անուանեն. ոչ միայն վասն զի Պոսրով Ա. Անուշրուանի ԻԲ. տարւոյն գտաւ թուականութիւնը իր սկզբնաւորութիւնը, այլ եւ Պոսրով եղաւ իր հարկային օրէնքով անոր գրութեան պատճառը:

Հայ պատմագիրներն ու սօմարագիրները, որոնք առիթ ունեցած են խօսելու Հայոց թուականի գրութեան մասին, շատ շիտակաբար պայտուսին իսկական եղելութեան նկատմամբ եւ ժամանակը, երբ հաստատուած է թուականը, շատ հակաժամանակագրական ցուցմունքներով մասնանիչ կ'ընեն: Պատճառը, ինչպէս ինձ կ'երեւայ,

պէտք է փնտռել այն իրողութեան մէջ, որ անոնք այլ եւ այլ ազբիւրներէ քաղած են իրենց տեղեկութիւնները, եւ զանազան դէպքեր, այլազան ժամանակներու մէջ պատահած, համաձուլած են ի մի, առանց ուշադրութիւն դարձնելու ժամանակագրական կէտերու:

Կը զանազանեմ՝

ա. ազբիւրներ, որոնք կը խօսին անտեսական-քաղաքական թուականի սկզբնաւորութեան մասին.

բ. ազբիւրներ, որոնք նկատի ունին գատակական կանոնը եւ եկեղեցական տարին:

գ. ազբիւրներ, որոնք խօսք կ'ընեն եկեղեցական տարւոյ վերաքննութեան մասին:

1. Տնտեսական-քաղաքական թուականի սկիզբ առաւ 552, Յուլիս 11ին, Պոսրով Ա. ԻԲ.⁴¹, Յուստինիանոսի ԻԵ.⁴² եւ Ներսէս Աշտարակեցոյ Դ.⁴³ տարւոյն, Ս. Յիզպիրով գիտի նահատակութենէ (9 Նոյ. 553) տարի մը յառաջ:

2. Եկեղեցական տարւոյ կամ Չատակահան Կանոնի (532 ամեայ չրջանի) մասին խորհրդակցութիւններ եւ որոշումներ եղած են Հայոց թուականի Ժ.⁴⁴, Յովհաննէս Գաբրիէլեցոյ⁴⁵ Զ., Պոսրովի ԼԱ.⁴⁶ տարւոյն (562), Վրթանէս Սիւնեաց եպիսկոպոսի եւ Միհր-Արտաշրի Սիւնեաց ախրջ օրով⁴⁷:

3. Եկեղեցական տարւոյ մասին խնդիրներ յուղուած են — ինչպէս կ'երեւայ նաև Մովսէս կաթողիկոսի (572—604) Ժ. տարւոյն⁴⁸:

Տեղւոյս չէ այս խնդրոյ շուրջը աւելի երկար յամել:

(Շարունակելի:)

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



⁴¹ Dulaurier, Recherches sur la chronologie arménienne, p. 105:

⁴² Տօմար, առ Չամչահանի, Բ., 509:

⁴³ Ասողիկ, 82:

⁴⁴ Dulaurier, անդ, 58:

⁴⁵ Տօմար, առ Չամչ., Բ., 509:

⁴⁶ Յովհ. Դրասխանակերտցի, Վարդան եւն:

⁴⁷ Սա. Օրպէլեան:

⁴⁸ Յովհ. Դրասխանակերտցի եւ այլք:

ՎՐԵՍՏԵՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն:)

Ա. ԳՆՈՒՅ

Հայաստանի հին բնիկները երկայնգլուխ եւ կարնգլուխ տիպեր: Սեպագիր յիշատակարանների գիւտն եւ ընթերցումը: Նայիրի, Ուրարտու, Վան եւ Խալդերը: Այժմեան Հայաստանի ամենից կարեւոր սեպագիր արձանագրութիւնը: Սեպագիրների լեզուն: Հայերէ՞ն քէ Վրացերէ՞ն: Հայ ժողովուրդի ծագումն եւ Արմենիա-Հայաստանի սկիզբը: Վանի սեպագիրների շրջանի եւ Խայ ազգային հին աւանդութիւնների համեմատութիւնը: Խալդեան ժողովուրդի մնացորդներն եւ սերունդը: Եզրակացութիւն:

Մեր երկրի նախկին բնիկների ցեղի նկատմամբ թորհ. Հայաստանում կատարուած հնագիտական պեղումները շահեկան արդիւնք են տուած՝ Հրազդան գետի հովիտում, 6 մետր խորութեան մէջ գտնուած է ամենահին մի կմախք: Երեւանի համալսարանի ուսուցչապետ Աշխ. Քալանթարի եւ Լէնինգրադի համալսարանի ուսուցչապետ Վիչնեսկու Քննութիւնից երեւաց, որ այդ կմախքը վերաբերում է հին քարէ դարի (paléolithique) շրջանին: Հայաստանի «Նութիւնների Պահպանութեան Կոմիտէի» 1924ին եւ 1926ին կատարել տուած պեղումներն երեւան են հանել յիշեալ կմախքի թուականից հազարաւոր տարիներ վերջը կառուցուած շինութիւններ, բնակավայրեր, ամբուրիւններ, սաճարներ, քարայրներ, դամբաններ եւ այլն, որոնք երկայնագլուխ ցեղի կամ ցեղերի գործ են եւ վերաբերում են քարէ դարի վերջերի եւ բրոնզէ դարի շրջանին, որ ասել է Քրիստոսից 3000—2500 տարի յառաջ: Այս շրջանից յետոյ եկող դարի (երկաքէ դար, որի մէջ գտնուած ենք հիմայ) գերեզմաններից հանուած կմախքների գտնուելը կարնգլուխ են: Ի՞նչ ցեղի էին պատկանում այս կարնգլուխաւորները: Այս խնդիրն այժմ կարելի է լուծուած համարել, շնորհիւ այն տարօրինակ հին յիշատակարաններին, որոնք ցրուած են պատմական Հայաստանի զանազան կողմերում, մասնաւոր Վանում: Գրաւոր Պատմութեան սկսելուց յառաջ հին ժողովուրդները, կամ նրանց իշխանները՝ Ժայռերի

վրայ մեխի կամ սեպի (բեւեռի) ձևով նշանագրերով արձանագրութիւններ են քանդակել, որով կամեցել են իրենց գործերի յիշատակը թողնել ապագայ սերունդներին: Այս նշանագիրներն են, որ կոչում ենք սեպագիր կամ բեւեռագիր (inscriptions cunéiformes): Այս հին յիշատակարանները իսկապէս Տարեգիրք չեն, այն իմաստով ինչ որ մենք ենք հասկանում, այսինքն իրար յաջորդող դէպքերի անընդհատ պատմութիւն: Դրանց հեղինակները, ասորեստանցիք, ուրարտեաններն եւ այլն, արձաններ են կանգնել կամ յայտնի տեղերի վրայ արձանագրութիւններ են փորագրել միայն այն ժամանակ երբ իրենք յաղթել են, կամ իրենց արշաւանքներն ու շարժումները յաջող ելք են ունեցել. իսկ երբ նրանք պարտութիւն են կրել, բացարձակապէս լուել են...:

Հայաստանի անցեալ քաղաքական կեանքին վերաբերող այդ հնագրեան նշանագրերը մէկ դարուց ի վեր հնագէտների եւ պատմաբանների հետաքրքրութեան եւ խորունկ քննութեան առարկայ են եղած: Առաջին լուրջ խուզարկութիւնն եւ ուսումնասիրութիւնը կատարել է Շուլց, որ 1827ին գաղղիական կառավարութեան յանձնարարութեամբ, այդ նպատակի համար եկել է Վան: Շուլց արտագրել է 42 արձանագրութիւն, որոնց 3ը ուրարտեան լեզուով չէին, այլ փոքրասիական ուրիշ հին լեզուներով:

Շուլցի օրինակը դրդեց ուրիշ եւրոպացի, ոուս եւ հայ գիտնականներին, որոնք հետզհետէ նորանոր արձանագրութիւններ քննեցին եւ օրինակեցին: Դրանց մէջ յիշատակութեան արժանի է Վալդէմար Բէլք (Belck), որ ամբողջ 4 տարի մնաց եւ շրջեցաւ Կովկասում եւ Վանի շրջակայքում, 31 սեպագիր ընդօրինակեց ու հրատարակեց, որոնց 22ը բոլորովին նոր էին: Վերջին հնախոյզն էր նոյն Բէլքի ընկերը գերմանացին Լէման Հաուպտ, որ իր ընդարձակ գիտական ուսումնասիրութիւններով մեծ լոյս սփռեց Հայաստանի անցեալի վրայ: Ռուս գիտնականների մէջ կարեւոր գործեր ունին Նի-

¹ Այս բարեխիղճ գիտնականը զոհ է գնացած իր եռանդուն եւ անխոնջ գործունէութեան: Տեղացի բուրգ աւազակներ սպանել են նրան, կողոպտելու նպատակով: Բարեբախտաբար նրա երկարատեւ բեղմնաւոր աշխատութեան արդիւնքը չէ կորած, այլ անփաստ փոխադրուած է Պարիզ, ուր 1840ին հրատարակուեց Journal Asiatique-ում: